Ընկերով կայնած քուչեն

Ընկերով կայնած քուչեն
Կարմիր վարդ, կարմիր վարդ,
Աղջի, թափ տուր էդ քեչեն, մարալ,
Հե՛յ, մարալ յար, անջիգյար: - 2 անգամ

Ընկերով կայնած քուչեն
Կարմիր վարդ, կարմիր վարդ,
Աղջի, արի բան ասեմ, մարալ, - 2 անգամ
Հե՛յ, մարալ յար, անջիգյար:

Բուսել ես բաղի միջին,
Կարմիր վարդ, կարմիր վարդ,
Դու ես իմ խաղի միջին, մարալ, - 2 անգամ
Հե՛յ, մարալ յար, անջիգյար:

Բոբիկ մի քելե, փուշ է,
Կարմիր վարդ, կարմիր վարդ,
Յար ջան, ձենդ անուշ է, մարալ, - 2 անգամ
Հե՛յ, մարալ յար, անջիգյար:

Զուն եմ, գուկամ սարերուն,
Կարմիր վարդ, կարմիր վարդ,
Հալիմ, թափիմ քարերուն, մարալ, - 2 անգամ
Հե՛յ, մարալ յար, անջիգյար:

Աղջի, գընանք մեր բախչեն,
Կարմիր վարդ, կարմիր վարդ,
Քաղենք ծառի ալուչեն, մարալ, - 2 անգամ
Հե՛յ, մարալ յար, անջիգյար: